ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- -------- 2025 թվականի №---Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №522-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) կատարել հետևյալ լրացումները.

1) ԷՀՑ կանոնների 151-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «բացառապես իրենց Առաջնային պահուստի շրջանակում,» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքի» բառերը, իսկ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» պարբերությամբ.

«գ. Կարգավարման ենթակա են ԿԷԱ կայանները, իսկ ԷՀՑ կանոնների 152.1-ին կետի պահանջի առաջնահերթ բավարարման դեպքում՝ նաև ՊԷԱ կայանները, այն դեպքում, երբ Համակարգի օպերատորը օրական ԷՀԱՄ-ի ճշգրտման արդյունքում եզրակացրել է, որ այդ կայանների կարգավարումը կանխելու է էլեկտրաէներգետիկական համակարգում

Արտառոց իրավիճակի առաջացումը, կամ էլեկտրաէներգետիկական համակարգի իրական ժամանակում աշխատանքի Անցումային ռեժիմները չեն հանգեցնելու Արտառոց իրավիճակի առաջացման կամ տարաժամկետելու են այն: Համակարգի օպերատորը սույն պարբերության համաձայն տրված կարգավարական կարգադրության, այդ թվում՝ սույն պարբերությամբ նշված կայանների կարգավարման ժամկետի, դրանց նվազեցվող կամ ավելացվող հզորության չափաքանակների մասին հնարավորինս սեղմ ժամկետում համապատասխան հիմնավորումներով տեղեկացնում է այդ կայանին, Շուկայի օպերատորին, ՀԾՄ-ին և Հանձնաժողովին, իսկ ՊԷԱ կայանների դեպքում՝ նաև Երաշխավորված մատակարարին.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ------- 2025թ.